| **Պայմանագրի կողմ** | **Պատվիրատու** |
|---|---|
| Արտակ Կապայի Մովսեսյան | ՀՀ քննչական կոմիտե |
| անձ. AN0719919 տրվ 046 կողմից | ՀՀ, ք.Երևան, Մամիկոնյանց 46/5 |
| Հասցե' ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արգել, 1-ին փող., 25-րդ 2., 35-րդ բն | ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն |
| "Կոնվերս բանկ" ՓԲԸ | Հ/Հ 900011000834 |
| ՀՀ 1930004679880100 | ՀՎՀՀ 02631263 |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«03» «06» 2019 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «—» «—» 2019թ.

Պայմանագրի համարը՝ N—

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «—» «—» 2019թ. դուրս գրված N— հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | Քանակական ցուցանիշը | | Կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | Գեմոլոգիական հետազոտություն 23/006/19թ. գործ | 7 հատ քարի գեմոլոգիական հետազոտություն | 1 | 1 | — | 03.06.2019թ. | 25,000 | ||| Եռ |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| **Ծառայությունը հանձնեց** | **Ծառայությունը ընդունեց** |
|---|---|
| ստորագրություն Կ.Տ. | ստորագրություն Կ.Տ. |

**ԱԿՏ N ________________**

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ քննչական կոմիտե (այսուհետ՝ Պատվիրատու) և Արտակ Կասյայի Մովսեսյանի (այսուհետ՝ Կատարող) միջև 2019թ. ______________ «___»-ին կնքված N______________ գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2019թ.______________«___»-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| Անվանումը | չափման միավորը (դրամ) | քանակը (փաստացի) |
| Գեմոլոգիական հետազոտություն | 25000 | 1 |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

ազգանուն, անուն

ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ
## Փորձագետ նշանակելու մասին

« 23 » ապրիլի 2019թ.

ք.Արթիկ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժնի պետ, արդարադատության առաջին դասի խորհրդական՝ Ա.Կ.Աղումյանս, քննարկելով վարույթիս թիվ 23100619 քրեական գործի նյութերը,

## ՊԱՐԶԵՑԻ՝

2019 թվականի փետրվարի 16-ին, ժամը 16:10-ից մինչև փետրվարի 17-ը ժամը 00:30-ն ընկած ժամանակահատվածում անհայտ անձը գողություն կատարելու նպատակով, տեխնիկական միջոցի գործադրմամբ ննջասենյակի եվրոարտադրության պատուհանի փեղկը բացելով, ապօրինի մուտք է գործել Ազգանուշ Աշոտիկի Սերոբյանի՝ Շիրակի մարզի Սառնաղբյուր գյուղի 5-րդ փողոցի 2-րդ նրբանցքի 4-րդ տուն և ննջասենյակում դրված դաշնամուրի ներքևի հատվածից գաղտնի հափշտակել է խոշոր չափերի՝ մոտ 2.000.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության ոսկյա և արծաթյա զարդեր:

Դեպքի առթիվ 2019 թվականի փետրվարի 17-ին ՀՀ քննչական կոմիտեի Արթիկի և Անիի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով հարուցվել է թիվ 23100619 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

2019 թվականի փետրվարի 17-ին ոստիկանության Անիի բաժնից ստացվել է գրություն այն մասին, որ 2019թ□ փետրվարի 16-ից 17-ն ընկած ժամանակահատվածում Ազգանուշ Աշոտիկի Սերոբյանին պատկանող Սառնաղբյուր գյուղի 5փ□ 2-րդ նրբ□ 4-րդ տանից գողություն կատարելու կասկածանքով ս/թ փետրվարի 17-ին ժամը 18:15-ին Արագածոտնի մարզի Արտենի գյուղի Սայաթ-Նովա փողոցի 21/2 շենքի բակից ոստիկանության Անիի բաժին է բերման ենթարկվել Սամսոն Անաստասի Քոչարյանը /ծնվ. 28.12.1997թ., բն. է Արագածոտնի մարզ գ.Արտենի 21/2շ. բն.4/, ով խոստովանել է, որ իր ընկերուհի՝ Անուշ Ռուդիկի Դարբինյանի մորաքրոջ Սառնաղբյուր գյուղում գտնվող տանից պատուհանից մուտք գործելու եղանակով ոսկյա զարդերի գողությունը կատարել է ինքը և գողոնը թաքցրել է Արտենի գյուղում գտնվող իրենց շենքի բակում: Բացի այդ Սամսոն Քոչարյանը հայտնել է, որ Անուշ Դարբինյանը ս/թ փետրվարի 6-ից 8-ն ընկած ժամնակահատվածում իր մորաքրոջ տանից գողացել և իրեն է տվել 4 կտոր ոսկյա զարդեր, որը ինքը գրավադրել է Արմավիր քաղաքում գտնվող գրավատանը և ստացել 550.000 ՀՀ դրամ:

Կասկածյալ Սամսոն Անաստասի Քոչարյանը խոստովանական ցուցմունք է տվել, որ Անուշ Ռուդիկի Դարբինյանի կողմից 2019 թվականի փետրվարի 6-ին Ազգանուշ Աշոտիկի Սերոբյանի Սառնաղբյուր գյուղում գտնվող տանից գողացված 4 կտոր ոսկյա զարդերը 2019 թվականի փետրվարի 7-ին իր անվամբ գրավադրել է Արմավիր քաղաքում գտնվող <<Գոլդ Կրեդիտ>> անվամբ գրավատանը և գրավադրված ոսկյա զարդերի դիմաց վերցրել է 550.000 ՀՀ դրամ գումար:

2019 թվականի փետրվարի 19-ին ոստիկանության Անիի բաժնից ստացվել է գրություն այն մասին, որ Սամսոն Անաստասի Քոչարյանը ոսկյա 4 կտոր զարդերը գրավադրել է Արմավիր քաղաքի Հանրապետության փողոցի 9/1 հասցեում գտնվող <<Գոլդ Կրեդիտ>> ՍՊԸ-ին պատկանող գրավատանը:

2019 թվականի փետրվարի 19-ին <<Գոլդ Կրեդիտ>> ՍՊԸ-ից առգրավվել են Սամսոն Քոչարյանի անվամբ գրավադրված ընդհանուր 5 կտոր հետևյալ զարդերը՝ կանացի ժամացույց, կանացի թևնոց, կանացի վզնոց, կանացի մատանի և նշանի մատանի:

2019 թվականի մարտի 27-ին նշանակվել է դատանյութագիտական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպության փորձագետներին:

ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, միներալների, հանքային ապարների հետազոտություն ենթատեսակով համապատասխան փորձագետի բացակայության հանգամանքից ելնելով՝

ճանաչել և փորձաքննության կատարմանը ներգրավել համապատասխան նեղ մասնագիտական գիտելիքներ ունեցող մասնագետի՝ գեմոլոգի:

Քրեական գործի նախաքննությամբ պարզվել է, որ Կոտայքի մարզի Արզնի գյուղի 1-ին փողոցի 25-րդ շենքի 35-րդ բնակարանի բնակիչ, 08.06.1971 թվականին ծնված, անհատ ձեռներեց Արտակ Կայայի Մովսեսյանը, ունենալով թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի մշակման բնագավառում շուրջ 20 տարվա մասնագիտական փորձ, կարող է աջակցել նշանակված փորձաքննության իրականացմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության 55-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետով, 85-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով,

# ՈՐՈՇԵՑԻ՝

Վարույթիս թիվ 23100619 քրեական գործով փորձաքննություն կատարելու համար փորձագետ նշանակել Արտակ Կայայի Մովսեսյանին, նրան բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված փորձագետի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, եզրակացություն տալուց հրաժարվելու, առանց քննիչի թույլտվության նախնական քննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ, 342-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

**ՀՀ ՔԿ Շիրակի մարզային քննչական վարչության**
**Արթիկի և Անիի քննչական բաժնի պետ՝** **Ա.Կ.Աղումյան**

**Որոշմանը ծանոթացա՝**

Մովսեսյան Արտակ Կայայի

«25» ապրիլի 2019թ.